

«ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ»¹

ՌԱՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Սկսենք Անանիա Շիրակացու տոմարական-տոնացույցային ժողովածուի կառուցվածքի ու բովանդակության քննությունը, ինչպես և նրա արժևորումը: Անանիա Շիրակացու Շ-եակ-Քննիկոնի վերականգնումը հիմնված է իր տեղեկությունների, ինչպես և հետագայում իրենից օգտված հեղինակների ու ընդօրինակված ձեռագրերի, հատկապես տոմարական ժողովածուների վկայությունների վրա:

Անանիա Շիրակացին տոմարական ժողովածուն սկսել է «Ժամանակական կանոնով», այսինքն՝ Ժամանակագրությունով², որի մասին հայտնում է իր Զատիկի մեկնության մեջ, այն է՝ «որպես եւ ի Ժամանակա[կա]ն կանոնին նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք»³:

«Ժամանակական կանոն» սկսել է «Այսպէս ի սկզբանէ արարածոց....» նախադասությամբ և ավարտել «Կայսերք հոռովմոց» ենթավերնագիրը կրող հատվածով, որոնք գտնվել են Դավիթ քահանայի ընդօրինակության հետևյալ հատվածներում՝

1. «Ի սկզբանէ արարածոց..... » սկսվածքով (էջ 3 ա),
2. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր եւ արն այն միաշաբաթ էր» նախադասությամբ (էջ 3 բ - 4 ա),
3. «Արդ ահա է պարունակք հարկաւոր շրջագայք....» սկսվածքով (էջ 4 բ - 5 բ),
4. «Անանիա համարողի վասն ընթացից արեգական ըստ ԺԲ կենդանատեսակացն եւ է զաւտեացն, զոր կատարէ ի տու(ը)նջե(ա)ն յաւուրս ՅԿԵ եւ ի Ժամս Գ» ենթավերնագրով (էջ 5 բ - 7 ա),

¹ Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

² Տե՛ս **Վարդանյան Ռ., Սարգսյան Լ., Սիմոնյան Գ.**, «Ժամանակական կանոնի»՝ Արարչության թվականության համակարգերի և Ա. Շիրակացու հաշվման սկզբունքների փոխառնչությունները, աստվածաբանության ֆակուլտետ, «Տարեգիրք», հ. 2, Երևան, 2011, էջ 21-47:

³ Ձեռ. թիվ 2679, էջ 3 ա-71 բ, տե՛ս նաև **Աբրահամյան Ա.**, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1979, էջ 294, **Մաթևոսյան Ա.**, Մատենան գիտութեան եւ հաւատոյ Դավթի քահայի, Նմանատվություն, Երևան, 1995, էջ 76 և այլն:

5. «Նորին Անանիայի» ենթավերնագրով (էջ 29 ա)⁴,
6. «Մովսէս Խորենացոյ եւ Անդրէասի» ենթավերնագրով (էջ 29 ա – 30 բ),
7. «Անդրէասի» ենթավերնագրով (էջ 30 բ – 41 ա),
8. «Պարսից թագաւորք» ենթավերնագրով (էջ 41 ա-42 ա),
9. «Իշխանք եբրայեցւոց» ենթավերնագրով (էջ 42 ա-44 բ),
10. «Առաջին մենիշխանութեանն Հռովմայեցւոց» ենթավերնագրով (44 բ – 47 ա),
11. «Թագաւորք Պարսից Սասանականք» ենթավերնագրով (էջ 47 ա),
12. «Եւսեբ ժամանակագրի» ենթավերնագրով (էջ 47 բ),
13. «Եպիփանու» ենթավերնագրով (էջ 47 բ - 49 ա),
14. «Պարսից թագաւորք» ենթավերնագրով (էջ 49 ա-49 բ),
15. «Կայսերք հռոմվոց թե որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործք[ք] գործեցան» ենթավերնագրով (էջ 49 բ - 71 բ):

«Ժամանակական կանոնի» սկզբնամասերում են եղել 1-5 հատվածները, որոնք հիմնավորվում են բնագրի տվյալներով: Բերենք Արարչության մասին առկա վկայությունը. այսպես, «Ի սկզբանէ արարածոց զլուսաւորդ յաւուր չորրորդի, ունելով ամանն լուսոյ ԺԳ արեայ զաճաման լրութիւն եւ ի հինգ-շաբթոյն լցաւ ԺԴ-ն, եւ այս յայտնի է յամենայն յեղանակս շրջա(գ)այութեանց ՇԼԲ ամաց եւ ի Քրիստոսի իսկ չարչարանաց: Վասն զի շրջա(գ)այութիւն եւ արեգական եւ լուսնի եւ ի նոյն դարձումն ամաց եւ ամսոց եւ ատուրց շաբաթու հետ ՇԼԲ ամաց լինի: Վասն զի լուսին ԺԹ ամաւք վարի, իսկ արեգակն՝ ԻԸ ամաւք, եւ սոքա երկոքին ընդ միմեանս բազմաւորելով զՇԼԲ ամս բաւանդակեն եւ ապա դառնան անդրէն ի նոյն գնացս ընթացից միաբանութեան: Արդ լուսին յաւուրն չորրորդի յորժամ եղեւ ԺԳ ատուրս ունելով, ոչ գոլով յառաջ քան լինել աշխարհի ատուրց, բայց միայն չորքն, որ յառաջ քան զլինել լուսաւորացն էին: Արդ համարելով զչորսն յերեք [ի]արիւր Խ են Թ եւ պիտի, որ է առաջին ամին արարածոց աշխարհի ատուրս ՅԽԵ ըստ լուսնի, որ պիտի ԺԲ ամսոցն լրումն ՅԾԴ-ն ատուրս այդ Թ եւս ար: Իսկ արեգակն կատարեաց զՅԿԵ արն եւ յերկիս ժաման, որ ունի ամել քան զլուսին ատուրս առաջնոյ ամին,

⁴ 5-րդ հատվածը ենթավերնագրված է «Նորին Անանիայի»: Այն Փիլոն Եբրայեցու «Այլաբանության» մտքի արթնության մասին հատվածն է, որ Բ. Սարգսյանը համարում է Անանիա Շիրակացու թարգմանությունը:

քան զԿԽԵ-ն Թ ար անլի, որ լինի յարակա երկրորդ ամի ի բոլորակա եւ ապա կարգաւ մինչեւ ցվախճան ինն ու տասներեկ(ին).....»⁵:

Վերականգնենք Արարչության 1-ին 19-ամյակի լրման և վերադիրների պատկերը:

Թիվ	Լուսնի լրման օրը հռոմեական և եբրայական տոմարներով	Վերադիր
1	Ապրիլի 4 (նիսան 14)	9
2	Մարտի 24 (նիսան 3)	20
3	Ապրիլի 12 (նիսան 22)	1
4	Ապրիլի 1 (նիսան 11)	12
5	Մարտի 21 (անելեաց 5)	23
6	Ապրիլի 9 (նիսան 19)	4
7	Մարտի 29 (նիսան 8)	15
8	Ապրիլի 17 (նիսան 27)	26
9	Ապրիլի 6 (նիսան 16)	7
10	Մարտի 25 (նիսան 4)	19
11	Ապրիլի 13 (նիսան 23)	30
12	Ապրիլի 2 (նիսան 12)	11
13	Մարտի 22 (նիսան 1)	22
14	Ապրիլի 10 (նիսան 20)	3
15	Մարտի 30 (նիսան 9)	14
16	Ապրիլի 18 (նիսան 28)	25
17	Ապրիլի 7 (նիսան 17)	6
18	Մարտի 27 (նիսան 6)	17
19	Ապրիլի 15 (նիսան 25)	28

Այսպիսի շարք ունի Ա. Շիրակացու կազմած 19-ամյակը՝ հայոց լրման օրերը գտնելու կանոններով և Շ-եակի հռոմեացոց շարքը՝ ապրիլի 4-ից և վերադիրն 9-ով սկսվող 19-ամյակով:

Ինչպես կտեսնենք, Արարչության թվականության համակարգերը հաշվել են նաև ապրիլի 2-ի և ապրիլի 13-ի լրման՝ 1-ին տարիներով, ու դրանցով տրվել են կոնկրետ թվեր և կատարվել հաշվարկներ:

Այսպիսով, Ա. Շիրակացու օգտագործած՝ Արարչության թվականության

⁵ Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 310-311:

համակարգերի առաջին տարին համարժեք է նրա կիրառած 19-ամյակի 1-ին տարուն, որը ապրիլի 4-ի լրման տարին էր՝ վերադիրը 9: Հետևապես, Ելքի, Հետոի՝ Հորդանանն անցնելու, Եզրասի՝ Զատիկի և Քրիստոսի Խաչելության տարիներն արտահայտված են թվականության համակարգերում տրված թվականները բաժանելով 19-ի, որոնց մնացորդներում պետք է ունենանք 1: Դրանով իսկ, ինչպես տվյալ դեպքում՝ Արարչության կամ Ադամի 1-ին տարվա կտրվածքով կհիմնավորվի, որ «Ժամանակական կանոնը» Ա. Շիրակացունն է⁶:

Ակնհայտ է, որ Անանիա Շիրակացին Արարչության թվականության համակարգերի հաշվարկն սկսել է արարչության (Ադամի) 1-ին տարուց՝ օգտագործելով Շ-եակն ու նրա բաղադրամասերը (Լուսնի լրման 19-ամյակը և անշարժ տոմարների շաբաթական շարքի կրկնման 28-ամյա (4x7) պարբերաշրջանը կամ Արևի փոքր շրջանը):

Ներկայացնենք հաջորդ փաստարկը, այն է. «Եւ եթէ կամիցիս գաւորս լուսնի գիտել: Կա՛լ [գլխուրս ամսոյն եւ զվերադիր տարոյն եւ զկէսսն (ուղղել՝ զկէսական, զկրկնական) ի նաւասարդէ]»⁷:

Վերոբերյալ կանոնը պահպանվել է Սամվել Անեցու ժողովածուում, իսկ Նավասարդի կրկնակի մասին՝ Ստեփանոս Մեծրկա որդու ժողովածուում: Վկայենք դրանք. 1. «Աւոր լուսնի այս[պէ՛ս արա]. կա՛լ գաւորս ամսոյն, զվերադիրն տարոյն եւ զկէսսն (ուղղել՝ կիսակն = կրկնակն) ի նաւասարդէ եւ երթ Լ (30), Լ (30), որ մնայ՝ աւուրք լուսնի է»⁸:

2. «Արդ, վասն զի նախ ասէ նաւասարդի չկայ, եթէ զինչ է, որ չկայ. վասն զի արարչութեան աւուրքն յառաջ քան զլինելութիւն մարդոյն էին, որ են Ե (5) աւր եւ կողին աւել աւուրք: Այն նաւասարդի ամսոյ կրկին է»⁹: Սա Արարչության տարում վերաբերում է կիսակի կանոնին ևս: Ուղղելով «կէսսն» կիսակով և կրկնակով՝ կատարենք արարչության ժամանակ Լուսնի հասակն ստանալու կանոնը՝ Անանիա Շիրակացու 10 թվականի՝ իբրև արարչության առաջին տարվա, կտրվածքով.

1. Ապրիլի 4-ի լրման տարին, ըստ Շ-եակի հոռմեացոց շարքի, 10 թվականն է, այդ տարվա վերադիրն 9 է, ապրիլի կիսակը՝ 1.5: Լուսնի հասակը լի-

⁶ Վարդանյան Ռ., Սարգսյան Լ., Սիմոնյան Գ., նշվ. աշխ., անդ, էջ 36-37:

⁷ Ձեռ. թիվ 2679, էջ 5 ա-բ:

⁸ Ձեռ. 1999, էջ 93 բ, տե՛ս նաև «Պատճէն տումարի» (Է- Ժ ե դդ.), աշխ.՝ Զ. Էյնաթեանի և Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2002, էջ 173:

⁹ Ձեռ. 1999, էջ 1-բ, տե՛ս նաև «Պատճէն տումարի», էջ 140:

նում է 14.5 ($4 + 9 + 1.5$), այսինքն՝ Լուսնի լրման՝ չորեքտասաներորդի օրը, այն եղել է 14.5 օրական:

2. Ահեկանի 30-ի լրման տարում, ըստ Շ-եակի, հայոց շարքի 10 թվականի վերադիրը 10 է, ահեկանի կիսակը և կրկնակը արարչության տարում՝ 5: Լուսնի հասակը = $30 + 10 + 5 = 45 - 30 = 15$ օրական: Ի դեպ, 10 թվականի կիսակի արժեքը 4 է: Իսկապես, Լուսնի ծննդից մինչև լրում 14.5-ից 15 օր է, որը կստանանք 19-ամյակի յուրաքանչյուր տարվա կտրվածքով: Այլ խոսքով, ըստ Անանիա Շիրակացու 19-ամյակի և կանոնի հաշվարկների՝ հիշյալ հատվածները եղել են «Ժամանակական կանոնի» սկզբում:

Ի դեպ, 1888 թվահամարի Տոնապատճառում չորեքշաբթի օրվա կանոնի տակ պահպանվել է «Այսպես ի սկզբանէ արարածոց....» հատվածը, որով վերականգնվում են «զշարադրութիւն տոմարացի» անընթեռնելի բառերն ու բառակապակցությունները:

Ասողիկի տեղեկությունները հիմնավորում են, որ «Ժամանակական կանոնը» Անանիա Շիրակացուն է և սկսում է արարչագործությունից: Բերենք նրա վկայությունները. 1. «Արժանի հաւատարմութեան առն զժամանակագրութիւնս շրջագային յոյժ գեղեցկախաղալ¹⁰ քանզի ՎՊԹ (3809) ամդ ստուգապես դիպեցուցանէ տասներեք (ուղղել՝ տասնչորս) Նիսանայ ելիցն յեգիպտոսէ: Իսկ յելիցն յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին, ըստ Որոգինեայ և Անանիայի Շիրակացոյ, ժողովին ամք ՆՂ (490), հանեալ ի բաց գեբրայեցոց ծառայութեան ժամանակն»¹¹:

2. «Իսկ Հրէից վարդապետք և Եւսերի ժամանակագիր ՆՂ (490) ամասեն յելից յեգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին, համարելով և զԺ (10) ամն եղիոն դատաւորի»¹²:

Առաջին վկայության մեջ Ասողիկը հղում է Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» հաշվարկներից մեկը, որտեղ Ադամից մինչև «Ելիցն Յեգիպտոսէ» 3809 տարի է, որը հանդիպել է Նիսանի 14-ի (= ապրիլի 4-ին) լրման տարուն: Կատարենք հաշվարկը: 3809-ը բաժանենք 19-ի, մնացորդում կունենանք 9, որը նշանակում է, որ Նիսանի 14-ի (= ապրիլի 4-ին) տարուց պետք է հետ գնալ 9 տարի, որպեսզի գտնվի հաշվարկի առաջին տարին. այն

¹⁰ Ձեռագիրը վերականգնել ենք, իսկ Ստ. Մալխասյանը փոխել է «շրջագայցն յոյժ գեղեցկապես»:

¹¹ **Ստեփանոս Տարոնացի Ասողկան** Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 8-9:

¹² Նույն տեղում, էջ 11-12:

ապրիլի 2-ի լրման տարին է, վերադրի (11), հնգյակի (5) ու վեցյակի (6) առաջին տարին է, այսինքն՝ Անանիա Շիրակացու հաշվարկներից մեկի առաջին տարին, որի վրա է հիմնվել Արարչության Կ. Պոլսի թվականությունը: Այն գտնում ենք Անանիայի խմբագրած «Իշխանք երրայեցուց....» հատվածի վերջում: Այնտեղ Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին տրված է 5810 տարի՝ Արարչության Կ. Պոլսի թվականով: Ի դեպ, Ասողիկն իր հաշվարկում պահպանել է Անանիա Շիրակացու հաշվարկի 3809 տարին, մինչդեռ պետք է լիներ 3810 տարի, ինչպես ցույց ենք տվել, որովհետև նրա առաջին տարին ապրիլի 13-ի լրման տարին է (Հայոց Մեծ թվականի 1-ին տարին է), իսկ 10-րդ տարին ապրիլի 4-ի լրման տարի էր (3810 : 19 = 10 մն.):

Այստեղ բավարարվենք այս վերլուծությամբ, իսկ վկայությունն ամբողջությամբ կներկայացնենք և կվերականգնենք «Իշխանք երրայեցուց» հատվածը քննարկելիս: Միայն նշենք, որ Ասողիկի վերը բերված 490 թվի օգնությամբ վերականգնվում է Անանիա Շիրակացու բերած դարագլուխներից մեկը:

«Ժամանակական կանոնի» շարունակությունն են կազմում 6-ից 15-րդ հատվածները (էջ 29 ա-71 բ), որոնք «շարադրութիւն տոմարագրաց»-ում ունեն ենթավերնագրեր:

6-րդ և 7-րդ հատվածները՝ «Մովսէս Խորենացոյ և Անդրեասի» և «Անդրեասի» (էջ 29 ա-41 ա) ենթավերնագրերով, Հիպոլիտոս Հռոմեացու ժամանակագրության՝ «Գիրք ծննդոց»-ի խմբագրությունն են՝ կատարված Անդրեասի ու Անանիայի կողմից: «Եւ յԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ յԱրկադէս եւ յՈնորէս՝ որդիս Թէոդոսի՝ ամք հարեւր եպանասուն եպօն (ուղղել՝ ՃԿԲ (162)) և ամիս մի»: Դարագլուխն Անդրեասի խմբագրությունն է, իսկ Մովսէս «Խորենացոյ և Անդրեասի» ու «Անդրեասի» ենթավերնագրերը, ինչպես և «յԱդամայ Յորեւեան ՃԺԲ (ուղղել՝ ՃԺԸ)» հաշվարկը Անանիա Շիրակացու խմբագրություններն են: Վերջինիս հիմնավորումը կտանք հետագա շարադրանքում:

Այժմ տեսնենք, թե Անդրեասի 200-ամյակը, որը թարգմանվել է ասորերենից, և ժամանակագրության խմբագրությունը, որը թարգմանվել է հունարենից հայերեն, երբ է կատարվել, և ովքեր են թարգմանիչները՝ հիմնվելով ժամանակակից սկզբնաղբյուրների և ասորերենից ու հունարենից կատարված թարգմանությունների ժամանակը որոշելու մեր առաջարկած տոմարական ու տոնացույցային մեթոդների վրա¹³:

¹³ Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, Երևան, 1993 Նն:

Ժամանակակցի՝ Կորյունի վկայությունների համաձայն¹⁴, Սահակ կաթողիկոսն ու Մաշտոց վարդապետը իրենց երկու կրոնավորներին՝ Հովսեփ Պաղնացուն և Եզնիկ Կողբացուն ուղարկեցին Ասորոց կողմերը, Եդեսիա քաղաքը, որպեսզի նրանց սուրբ հայրերի ավանդությունները ասորերենից հայերեն դարձնեն ու գրեն։ Կորյունը այնուհետև շարունակում է, թե թարգմանիչները հասան Եդեսիա, Սահակ կաթողիկոսի ու Մաշտոց վարդապետի պատվերները կատարեցին ու սուրբ հայրերի ավանդությունները թարգմանած ուղարկեցին Հայաստան, իսկ իրենք գնացին հունաց կողմերը և ուսումնասիրելով ու հմտանալով կարգվեցին հունարենի թարգմանիչներ։

Ըստ Կորյունի՝ Հովսեփ Պաղնացու ու Եզնիկ Կողբացու՝ հունաց կողմերը գնալուց մի ժամանակ անցնելուց հետո պատահեց, որ Հայաստանից գնացին կրոնավորներ Ղևոնդ Երեցը և ինքը՝ «Վարք Մաշտոցի» հեղինակ Կորյունը, և Կոստանդնուպոլսում հարեցին Եզնիկ Կողբացուն՝ իբրև Կորյունի ընտանեգույն սննդակցի։ Հետո նրանք աստվածատուր գրքերը, այն է՝ Աստվածաշնչի (70-իցի) հաստատուն օրինակներով և շատ շնորհագիր հայրերի հետագա ավանդություններով, նիկիական ու եփեսական կանոնների հունարեն օրինակներով վերադարձան ու այդ գրքերը դրեցին Սահակ կաթողիկոսի ու Մաշտոց վարդապետի առջև։ Իսկ կաթողիկոսը Եզնիկի հետ համատեղ համեմատեց Աստվածաշնչի ասորերեն ու հունարեն բնագրերը հայերեն թարգմանությունների հետ։ Պարզ է, որ նրանք կատարել են Աստվածաշնչի 2-րդ խմբագրությունը, այդ թվում՝ Մակաբայեցոց գրքերն են թարգմանել մոտ 435-440 թթ. սահմաններում։

Թարգմանիչների վերադարձը տեղի է ունեցել Եփեսոսի Ժողովից (431 թ.) և Սահակ Պարթևի՝ Պարսկաստանի աքսորից վերադառնալուց (432/433 թթ.) հետո, այն է՝ մոտ 433-436 թթ. սահմաններում, միջին հաշվով՝ 434 թ.։

Հիմնվելով թարգմանությունների ժամանակի որոշման վրա՝ Եզնիկ Կողբացին ու Հովսեփ Պաղնացին 416 թվից Եդեսիայում էին, իսկ Եփեսոսի ժողովից առաջ, հավանաբար, 430 թվից՝ արդեն հունաց կողմերում և զբաղվում էին հունարենից հայերեն թարգմանություններով։

Ասորերենից թարգմանված բնագրերի ժամանակի որոշումը թույլ է տալիս պնդել, որ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին ասորերենից են

¹⁴ Կորին, Վարք Մաշտոցի, Երևան, 1962, էջ 118-119, տե՛ս նաև Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, էջ 22-23։

թարգմանել Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցու պատմությունը» (416-419 թթ.), Եփրեմ Ասորու Հին ու Նոր Կտակարանների մեկնությունները (416-419 թթ.), «Թուրթ Արքարու թագաւորի եւ վարդապետութիւն Աղէի առաքելոյ» (416-419 թթ.), «Վկայք Արեւելից»-ը (422 թ.), Գորիայ եւ Շմաւոնի վկայաբանությունը (422 թ.), ինչպես և Անդրեասի 200-ամյա տոմար-տոնացույցը (429 թ.):

Բերված ցանկով չեն սպառվում Եզնիկ Կողբացու և Հովսեփ Պաղնացու ասորերենից հայերեն կատարած թարգմանությունները: Ելնելով այն իրողությանից, որ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ արարչութեան մեկնությունը», ինչպես և Եվսեբիոս Եմեսացու «Ութամատյանի մեկնություն»-ը թարգմանվել են ասորերենից մինչև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը, քանի որ վերջինս օգտվել է դրանցից, կարելի է ամենայն վստահությամբ պնդել, որ այդ երկերը ևս թարգմանվել են 416-429 թթ. ընթացքում Եզնիկ Կողբացու և Հովսեփ Պաղնացու կողմից:

Պարզեցինք, որ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին գնացել են հունական կողմերը, որտեղ ուսումնասիրելով հունարենը և հմտանալով կարգվել են հունարենի թարգմանիչներ, հավանաբար 430-434 թթ., իսկ հայրենիք են վերադարձել մոտ 434 թ., ու Սահակ կաթողիկոսն ու Եզնիկ Կողբացին կատարեցին Աստվածաշունչ մատյանի 2-րդ խմբագրությունը Յոթանասնիցի կանոնական օրինակի հիման վրա՝ 434 - 440 թվականների սահմաններում: Յույց ենք տվել, որ Մակաբայեցոց գրքերը ևս այդ ժամանակ են թարգմանվել հունարենից: Իսկ Հովսեփ Պաղնացին ու Եզնիկ Կողբացին 430-434 թթ. սահմաններում թե ինչ են թարգմանել հունարենից, հիմնավորվում է Եզնիկի «Եղծ աղանդոց»-ի մի վկայությամբ: Պարզվում է, որ նա օգտվել է Անդրեասի Ժամանակագրությունից, որը Հիպոլիտոս Հռոմեացու Ժամանակագրության խմբագրությունն էր: Այն հիմնավորվում է Անդրեասի Ժամանակագրության ու Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի համադրությամբ: Բերենք այդ հատվածները՝

Անդրեաս	Եզնիկ Կողբացի
Յաւան՝ Եւ ի նմանէ Յոյնք եւ Հեղդէնք (Անանիա Շիրակացի, մատենագրություն, էջ 359)	Բայց Յոյնք ի յաւանայ եւ Հելլէնք (կողքին Յոյնք) (Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», Թ., 1914, էջ 144)

Պարզ է, որ հիշյալ թարգմանությունը կատարել է կա՛մ Հովսեփ Պաղնացին, կա՛մ Եզնիկ Կողբացին 440 թ.-ից, այն է՝ Եզնիկի «Եղծ աղան-դոց»-ից առաջ՝ 430-434 թթ. ընթացքում:

Մովսես Խորենացին նույնպես օգտվել է Անդրեասի Ժամանակագրու-թյան հայերեն թարգմանությունից՝ 470-ական թթ. վերջերին – 480-ականների սկզբներին:

Մովսես Խորենացին գրում է. «Արդ զԿայսան չորրորդ ի Նոյէ ամե-նայնք ի Ժամանակագրացն գրեն և ի Սեմայ երրորդ: նոյնպէս և զԹիրաս, չոր-րորդ ի Նոյէ, իսկ ի Յաքեթայ երրորդ, թէպէտ և ըստ մերում թարգմանու-թեանս (Աստվածաշնչի – Ռ. Վ.) ոչ ուրեք ի բնագրի գտանի: Իսկ զՄեստրայիմ չորրորդ ի Նոյէ և երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեանս և ոչ ի Ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք: Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշմագունէ և յընթերցասիրէ ումեմն Ասորոյ, և հաատարիմ թուեցաւ մեզ ասացեալն»¹⁵:

Հիշյալ ուշիմագույն ու ընթերցասեր ասորին Անդրեասն է, որն իր Ժամա-նակագրության մեջ Մեստրայիմին դնում է Նոյից հետո 4-րդ, իսկ Քամից հե-տո՝ 3-րդ տեղերում¹⁶:

Մովսես Խորենացին «Պատմութիւն Հայոց»-ի 4-րդ գլուխն ամբողջու-թյամբ և 5-րդ գլխի մի մասը ու այլ հատվածներ քաղել է Անդրեասից: Դրանում համոզվելու համար կարող ենք համադրել Անանիա Շիրակացու «Ժամանա-կական կանոնի» միջնորդությամբ մեզ հասած Անդրեասի Ժամանակագրու-թյան համապատասխան հատվածները Խորենացու պատմության համարժեք հատվածների հետ¹⁷:

Այդ բնագրերի համեմատությունից երևում է, որ դրանք բառացիորեն կրկնված են: Խորենացին փոքր-ինչ համառոտել է Անդրեասին, իսկ որոշ հատվածներում փոխ է առել միայն անվանումները: Էլ չենք ասում, որ կարելի է մեկը մյուսով սրբագրել:

Միաժամանակ պարզ է դառնում, որ Անդրեասի Ժամանակագրությունն է Խորենացու սկզբնաղբյուրը և ոչ թե հակառակը, ինչպես փորձել է ցույց տալ Բ. Սարգսյանը: Դեռ ավելին, Հիպոլիտոս Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ը հունա-րենից հայերեն է թարգմանել Եզնիկ Կողբացին կամ Հովսեփ Պաղնացին ոչ

¹⁵ **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, գիրք Ա, գլ. Ե, էջ 19-20:

¹⁶ Տե՛ս **Անանիա Շիրակացու մատենագրությունը**, էջ 360:


¹⁷ Տե՛ս **Անանիա Շիրակացու մատենագրությունը**, էջ 357-359, 365 ևն ու **Մովսէս Խո-րենացի**, Պատմութիւն Հայոց, էջ 14-15 ևն:

անմիջականորեն, այլ Անդրեասի ժամանակագրության խմբագրության միջնորդությամբ, որին մի դարագլուխ ավելացնելով՝ Անդրեասը հասցրել է Արկադիոս ու Ոնորիոս:

Այլ խոսքով՝ Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» միջնորդությամբ մեզ հասած Անդրեասի բնագրերը, այն է՝ «Մովսես Խորենացու եւ Անդրեասի» և «Անդրեասի» ենթավերնագրերով, թարգմանվել են 430-434 թթ. Եզնիկ Կողբացու կամ Հովսեփ Պաղնացու կողմից:

Հարկ է նշել, որ Հիպոլիտ Հոմեացին լատիներենով գրել է Ծննդոց գրքի ժամանակագրությունը և հասցրել 234/35 թթ.: Դրանից առաջացել է լատիներենի 2-րդ տարբերակը: Դրանց նախնական բնագրերը վերականգնվում են հունարենով, ասորերենով ու արաբերենով հասած հետագա խմբագրությունների շնորհիվ:

«Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության հետագա խմբագրություններից կազմել են 1-ին և 2-րդ տարբերակների stamma-ն՝ հետևյալ տեսքով՝



Ալեքսանդրյան երկու անկախ հունարեն տարբերակներից, ինչպես երևում է կազմած ծառից, առաջացել է երկու ճյուղ, որտեղ անհրաժեշտ է ճշտում կատարել՝ ելնելով ժամանակագրության հայկական տարբերակի թարգմանության (430-434 թթ.), դեռ ավելին, Անդրեասի ժամանակագրության խմբագրման (395-401 թթ. և 401 թ.), որի մասին կգրենք քիչ հետո, թվագրումներից: Ասենք նաև, որ Անդրեասի խմբագրությունը հարում է Հիպոլիտոս Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության 1-ին տարբերակին: Այդ ճյուղում քրոնիկոնի 474-518 թթ. խմբագրություն-ընդօրինակությունը դրված է Անդրեասի խմբագրությունից առաջ, մինչդեռ Անդրեասի խմբագրությունը պետք է դնել 395-401 թթ., ավելի ստույգ՝ 401 թ. հայերեն թարգմանությունը՝ 430-434 թթ., նոր միայն քրոնիկոնի հաջորդ խմբագրությունը՝ 474-518 թթ., որից հետո Անանիա Շիրակացու խմբագրությունը՝ 686 թ., իսկ վերջինիս նախագաղափարը՝ Ժողովածուի մեջ 730-ական թվականներին, որի ընդօրինակությունը կատարվել է 981/82 թթ.:

Պարզվում է, որ Հիպոլիտ Հռոմեացու «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության ալեքսանդրյան խմբի հնագույն տարբերակը Անդրեասի խմբագրությունն է, որն առաջնակարգ նշանակություն պետք է ունենար ուսումնասիրողների համար Հիպոլիտոսի նախնական բնագրի վերականգնման ժամանակ և պետք է ունենա ապագայում:

Այսպիսով, Անանիա Շիրակացու խմբագրությունը ոչ միայն հնարավորություն է տալիս թվագրելու Անդրեասի խմբագրությունը (401 թ.), այլև պահպանել է այն և առայժմ դարձրել է Հիպոլիտ Հռոմեացու 1-ին տարբերակի մի ճյուղի հնագույնը, որն առաջնակարգ նշանակություն ունի վերջինիս «Գիրք ծննդոց»-ի ժամանակագրության հետագա ուսումնասիրության համար:

Հիպոլիտոս-Անդրեասի ժամանակագրության վերջում ավելացվել է մի դարագլուխ ևս, այն է՝ «ԵԻ ՅԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ յԱրկադէս եւ յՈնորէս՝ որդիս Թէոդոսի՝ ամբ հարեւր եւթանասուն եւթ (ուղղել՝ ԾԿԲ))) և ամիս մի: (Եւ) յԱդամայ Յոբեղեան ԾԺԲ (ուղղել՝ ԾԺԸ)» (էջ 41 ա):

Այս կապակցությամբ Բ. Սարգսյանը ծանոթագրում է. «...վերջինս ուրիշ դարագլուխ մը եւս կը յաւելու, նոյն կայսրէն մինչեւ Արկադէոս և Ոնորեոս. այս առանց նշանակութեան չէ. Այսինքն թէ Հիպոլիտեայ ժամանակագրութեան հայերէն թարգմանութեան առթիւ և Ե դարուն յաւելուած է: Վասն զի եթէ Անանիի Շիրակացիին ըլլար զանի թարգմանողն, ուրիշ դարագլուխներ ևս պիտի դներ ըստ ինքեան, ինչպէս տեսանք Զ ոսկեփորիկէն և է ճառընտրէն:

Սակայն այս կետիս վրայ պնդել չեմ ուզեր, որովհետև ուրիշ անյայտ պատճառն ևս կարող է յառաջագայիլ այդ երեւոյթը»¹⁸:

Ասենք, որ Հիպոլիտոսի՝անդրեասյան խմբագրւոյնն ավարտվում էր, ուստի կա՛մ հեղինակը, կա՛մ դրա խմբագիրը պետք է ամփոփեր Արարչութիւնից մինչև այդ պահը, որն ամբողջացրել է հորեւյանի տարիների քանակով:

Բայց այժմ տանք ձեռագրում տեղ գտած հավելումներն ու գրչական սխալները: Հիպոլիտոսը Քրիստոսի Ծննդից մինչև Խաչելոյթուն տվել է 30 տարի, իսկ Անդրեասը՝ 32: Ալեքսանդր Մամեայից մինչև Թեոդոսի որդիներ Արկադիոս ու Ոնորիոս՝ 177 տարի և մեկ ամիս, որին գումարենք Ալեքսանդր Մամեայի 12 կամ 13-րդ տարվա արարչութեան թիվը՝ 5738-ը, կստանանք 5915, որը 118 հորեւյանից ավելի է 15 տարով: Ուստի 177-ը դարձնելով 157 կամ 167 նոր միայն կստանանք 5895 կամ 5905, որը պետք է լինի 5900, որովհետև հորեւյանով արտահայտված արարչութեան թիվը կլոր է, ուստի հորեւյանի թիվը պետք է սրբագրել 118 և նկատել, որ ՃԺԲ-ն նախնական բնագրում եղել է ՃԺԸ: Ուստի 177 տարի և մեկ ամիսը պետք է սրբագրել 162 տարի (5738 + 162 = 5900): Հարց է առաջանում, թե ով կարող էր դնել ամփոփիչ թիվը՝ 118 հորեւյանը, Անդրեասը, հայ թարգմանի՞չը, ինչպես մտածել է Բ. Սարգսյանը, թե՞ հետագա խմբագրողը: Պատասխանը մեկն է՝ վերջինը՝ Անանիա Շիրակացին: Հիմնավորենք բնագրային փաստով ու Անանիա Շիրակացու հաշվողական սկզբունքներով: 118 հորեւյանի թիվը բազմապատկենք 50-ով՝ կստանանք 5900, որն Ադամից մինչև Թեոդոսի որդիներ Արկադետոսի ու Ոնորիոսի տարիներն են, թեև Անդրեասը նրա՝ Արկադետոսի տարին չի նշում, սակայն կարող ենք գտնել, եթե սկզբունքորեն լուծենք խնդիրը: Ստացած 5900-ը բաժանենք 19-ի՝ մնացորդում կստանանք 10, որը ապրիլի 4-ի լրման՝ Շիրակացու ընդունած 19-ամյակի առաջին տարին է, և հետ գնանք հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարին. այն նաև Հայոց մեծ թվականի 1-ին տարին է, ինչպես և Անանիա Շիրակացու Շ-եակի առաջին տարին՝ հաշվման իմաստով: Այդ երկու լրումների միջև կա 9 տարվա տարբերութիւն: Ինչպես տեսանք, Անանիա Շիրակացին Արարչութեան առաջին տարին համարում է Նիսանի 14 = ապրիլի 4-ի լրման տարին, որն իր 19-ամյակի առաջին տարին էր:

¹⁸ **Սարգիսեան Բ.**, Անանուն ժամանակագրութիւն խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց, Վիեննա, 1904, էջ 19:

Ուրեմն այստեղ խոսքը 401 ներկա թվականի մասին է: Կատարենք թվաբանական գործողությունը՝ նույնպես 19-ամյակի մնացորդների հաշվարկով: 5900 (արարչ. թվ.) բաժանենք 19-ի, մնացորդում կունենանք 10, այսինքն՝ առաջին՝ ապրիլի 13-ի լրման տարուց գնանք 10 տարի, կստանանք ապրիլի 4-ի լրման տարին, կամ ապրիլի 4-ի լրման տարուց հետո գնանք ապրիլի 13-ի լրման տարի, կունենանք 10 տարի: Իսկ ներկա թվականի մնացորդով 10 տարի ($401 : 19 = 11$ մն., ինչպես ընդունված է՝ մինուս մեկ տարի):

Արդյունքները ներկայացնենք աղյուսակով:

Թվականներ	Մնացորդ	Լրման օրը	19-ամյակի 1-ին տարին
5900 (Արարչ. թվ.)	10	Ապրիլի 4	Ապրիլի 13
401 (ներկա թվ.)	11 (-1)	Ապրիլի 4	Ապրիլի 13

Կարելի է մտածել, որ Անանիա Շիրակացին հաշվել է Անդրեասի ժամանակագրության ավարտի թվականով: Այլ խոսքով՝ 118 հորեյյանը Ադամից մինչև Արկադիոսի 6-րդ տարվա՝ Անանիա Շիրակացու հաշվարկն է, որն իրականացրել է Անդրեասի ժամանակագրության խմբագրության ժամանակ:

Ինչ վերաբերում է Հիպոլիտոսի ամբողջ ժամանակագրության տեղեկություններին, ապա բերենք դրանք հերթականությամբ՝ համառոտելով:

1. «Եւ առնին յԱդամայ մինչեւ Ջրհեղեղ ամք Ս[Մ]ԽԲ»¹⁹:
2. «Եւ առնին ի Ջրհեղեղէն մինչեւ ցՓաղեկ Ամք՝ ՇԻԵ եւ յԱդամայ ամք ՍԶԿԷ»²⁰:
3. «Արդ՝ առնին ի բաժանացն երկրի մինչեւ ի գալ Աբրահամու յերկիրն Քանանացոց ամք ՈԺԶ: Եւ յԱդամայ.... ամք՝ ՎՅՁ [Գ] (քն. Դ)»²¹:
4. «Արդ՝ առնին, յորմէ հետէ եկն Աբրահամ յերկիրն Քանանու մինչեւ ի մեռանելն Յետուայ, որդւոյ Նաւեայ ամք՝ ՇԱ: Եւ յԱդամայ ամք՝ ՎՊԶԴ»²²:
5. «Եւ առնին ի Յետուայ, որդւոյ Նաւեայ մինչեւ յառնուլն Դաւթի գթագաւորութիւն ամք՝ ՆՁ (քն. ՆՁԷ) եւ յԱդամայ ամք ՏՅԿԴ»²³:

¹⁹ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 359:

²⁰ Նույն տեղում

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 356:

²³ Նույն տեղում, էջ 367:

6. «Եւ ի Դաւթայ մինչեւ ի Սեդեկիա եւ գերութին Յեքոնիա[] ամք ՆՀ [Ը] եւ ամիսք ինն (ըն. ՆՀԳ)»:
7. «Եւ յԱդամայ մինչեւ ի գերութինն Բաբելացոց, որ եղև յաւուրս Յեքոնիա ամք ՏՊԽԲ ամիսք ինն»:
8. «Եւ ի գերութենէն Բաբելացոց մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամք ՈԿ»:
9. «Եւ ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ ի չարչարանս նորին ամք՝ ԼԲ»:
10. «Եւ ի չարչարանացն Քրիստոսի մինչեւ յամն երկուտասաներորդ քսաներորդ առաջնորդի թագաւորին Հռոմոց Ալեքսանդր առնին ամք երկերիւր հինգ եւ ամիսք վեց»:
11. «Եւ յԱղեքսանդրէ Մամեայ մինչեւ Արկադէս եւ յՈրոնէս՝ որդիս Թեոդոսայ ամք՝ հարեւր եւթանասուն եւթն (ուղղել՝ 162) . եւ ամիս մի. եւ յԱդամայ՝ Յոբեղեան ՃԺԲ (ուղղել՝ ՃԺԸ)»²⁴:

Հիպոլիտոս-Անդրեաս-Անանիա Շիրակացու Արարչության թվականության համակարգերը դարագլուխներով ուսումնասիրողները և մենք վերականգնում ենք հետևյալ տեսքով՝ 11. Ալեքսանդրի 12-րդ տարուց մինչև Թեոդոս Մեծի որդիներ Արկադիոսի (6-րդ) ու Ոնորիոսի տարին կազմում է 162 դարագլուխ–տարի, իսկ Ադամից հաշված մինչև Արկադիոսի 6-րդ տարին՝ 118 հոբեյան = 5900 (118 x 50) հանրագումարային տարի:

Անանիա Շիրակացին օգտագործել է 532-ամյա պարբերաշրջանը, որի 1-ին տարին հաշվման իմաստով ապրիլի 13-ի լրման տարին էր, իսկ 19-ամյակի 1-ին տարին՝ ապրիլի 4 = Նիսանի 14-ի լրման տարին, որը հիմնավորեցինք արարչության (Ադամի) 1 թվականի կտրվածքով, հետևապես առկա թվականության համակարգերի՝ դարագլուխներով տրված թվականները (առանձնապես Ելքի, Քրիստոսի խաչելության) բաժանելով 19-ի մնացորդում պետք է ունենանք 1 կա՛մ ապրիլի 13-ի (Շ-եակի հաշվման իմաստով 1-ին), կա՛մ ապրիլի 2-ի (Կ. Պոլսի արարչության թվականի 1-ին) տարին, որովհետև համարյա բոլոր ժամանակագիրների մոտ Արարչությունից մինչև Ջրհեղեղ 2242 տարի է, Ջրհեղեղից մինչև Փաղեկ՝ 525 տարի, իսկ Փաղեկից մինչև Աբրահամ՝ 616 տարի, որոնց գումարը ևս 3883 տարի է: Ուստի ընդօրինակության մեջ կատարվել է Գ>Դ գրչական սխալը: Ժամանակագրության մեջ իսրայելացիների՝ Եգիպտոսում և անապատում գտնվելու տարիները համարվել են 440 տարի, ըստ Թագավորությունների Գ գրքի, իսկ վերոբերյալ

²⁴ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 369:

հատվածում Աբրահամից՝ Ահարոնի 83-րդ տարին հավասար է 431 տարվա: Եթե Ղևիի 46 տարին սրբագրենք 42, ապա կստանանք 427 տարի: Հիպոլիտին հետևած ժամանակագրությունների խմբագրությունների մեջ Աբրահամից Ելք համարել են 423 –ից 432 տարի, որի միջին թիվը 427 տարի է: Ուստի, արդարանում է Ղևիի ԽԶ-ի սրբագրումը ԽԲ-ով, որն առկա է նաև ժամանակագրության խմբագրությունների մեջ: Նկատի ունենալով, որ, ըստ Անանիա Շիրակացու, Ելքի Զատիկը եղել է Նիսանի 14-ին, ստանում ենք հետևյալ արդյունքները՝ Արարչությունից մինչև Աբրահամ ընկնող 3383-ին գումարենք 427 տարի (միջին թիվը), կստանանք 3810 տարի, որը բաժանելով 19-ի մնացորդում կունենանք 10 տարի, որից հետ գնանք 9 տարի, կունենանք 1, այն է՝ նիսանի 14-ի=ապրիլի 4-ի լրման տարին: Պարզ է; որ հաշվարկը կատարվել է հաշվման իմաստով ապրիլի 13-ի լրման տարուց, որից սկսած՝ 10-րդ տարին է ապրիլի 4-ի լրման տարին:

Այսպիսով, ստացանք Անանիա Շիրակացու հաշվման համակարգը, և պարզվեց, որ նա Արարչագործության (Ադամի) առաջին տարի համարել է ապրիլի 4-ի լրման տարին, իսկ Ելքի (3810) և Արկադիոսի 6-րդ տարին, որը ժամանակագրության ամփոփիչ թիվն է (Ադամից Արկադիոսի 6-րդ տարին =5900 տարի), հաշվարկել է Շ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց: Ապրիլի 4-ի և ապրիլի 13-ի լրման տարիների միջև առկա 9 տարին հետ գնալով՝ ստացել է 1, այսինքն՝ ապրիլի 4-ի լրման տարին, որը համարել է Արարչության և իր 19-ամյակի 1-ին տարին: Այստեղ գործում են Անանիա Շիրակացու երկու սկզբունքները, այն է՝ հաշվարկներ կատարել է Շ-եակի հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման տարուց և իր ընդունած 19-ամյակի 1-ին՝ ապրիլի 4-ի լրման տարուց: Սակայն ասենք, որ Անանիա Շիրակացին կիրառել է նաև ապրիլի 2-ի լրման տարուց սկսվող հաշվարկը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում:

Վերականգնենք Անանիա Շիրակացու «Ժամանակական կանոնի» (ինչպես և Հիպոլիտոսի ու Անդրեասի) Արարչության (Ադամի) թվականության համակարգի հաշվման սկզբունքները:

Արարչության թվական	Ներկա թվական	19-ամ- յակի մնացորդ	19-ամ- յակի լրման տարին	19-ամ- յակի 1-ին տարին
1		1	A 4	A 4
3810 (Արարչ. Ելք)		10	A 4	A 13
5500 (Արարչ.-ից Քրիստոս)		9 (+1)	A 13	A 13
5502 (Արարչ.-ից Քրիստոս՝ ըստ Հիպոլիտոսի և Անդրեասի)		11 (- 1)	A 4	A 13
5530 (Արարչ.-ից Քրիստ. խաչելություն)		1	A 4	A 4
Քրիստոսի խաչելություն	30	11 (- 1)	A 4	A 13
5532 (Արարչ.-ից Քրիստ. խաչելություն՝ ըստ Հիպոլիտոսի)		3 (-2)	A 4	A 4
5534 (Արարչ.-ից Քրիստ. խա- չելություն՝ ըստ Անդրեասի)		5 (-4)	A 4	A 4
5900 (Արարչ.-ից Արկադ. 6-րդ տարին)		10	A 4	A 13
	401	2 (-1)	A 13	A 13

Ակնհայտ է, որ Հիպոլիտոսն ու Անդրեասը չեն ունեցել հաշվման հա-
մակարգ: Անանիա Շիրակացու՝ Շ-եակի վրա հիմնված հաշվման սկզբունք-
ները Հիպոլիտոսի հետ տալիս են 2 տարվա տարբերություն, իսկ Անդրեասի
հետ՝ չորս:

Lib. Gen. 1-ին և 2-րդ բնագրերում, ինչպես և մասամբ V C. I. G. 8613
արձանագրության մեջ մեզ են հասել Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն
ընկած ժամանակահատվածների՝ դարազույններով տրված թվականներ:
Դրանց մեջ արտացոլված են Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն կատար-
ված Զատիկները (Ելքի, Հեսուի, Եզեկիայի, Օվսիայի, Եզրասի և Քրիստոսի
խաչելության), որը, ըստ էության, Զատկացուցակ է՝ նշված Զատիկների դա-
րազույններով: Ժամանակագրության հայերեն թարգմանության և խմբագրու-
թյան մեջ չկա այդ Զատկացուցակը: Վերոհիշյալ Զատիկների մասին գրված է
Ժամանակագրության՝ Ա. Շիրակացու հայերեն տարբերակի մեջ, ինչպես և
դրանք մեկնված են նրա Զատիկ ճառի մեջ, որոնք կքննենք հետագա շա-

րադրանքում: Այդ բնագրերը հրատարակել է Ռ. Բաուերը, վերականգնել է այն և ներկայացրել աղյուսակի տեսքով, այն է՝

h) Ալեքսանդր Սևերոսի 13-րդ տարվա 2-րդ հաշվարկը՝ գատկական հեռավորությունների միջոցով²⁵:

Lib. Gen. I		Lib. Gen. II		C.I G 8613
Ադամից բաժանում	2242	Ադամից բաժանում	2242	
Բաժանումից Աբրահամի Քանան գալը	1141	Բաժանումից Աբրահամի Քանան գալը	[245] 1145	
Աբրահամից Անապատի Ջատիկ	430	Աբրահամից Ելք	430	
Անապատի Ջատիկից Հեսուի Ջատիկ	41	Ելքից Հեսուի Ջատիկ	[531] 31	2)41 39
Հեսուի Ջատիկից Եզեկիայի Ջատիկ	[464] 864	Հեսուի Ջատիկից Եզեկիայի Ջատիկ	864	864
Եզեկիայի Ջատիկից Օվսիայի Ջատիկ	(114)uhr 114	Եզեկիայի Ջատիկից Օվսիայի Ջատիկ	115	113
Օվսիայի Ջատիկից Եզրասի Ջատիկ	(108) 107	Օվսիայի Ջատիկից Եզրասի Ջատիկ	111	107
Եզրասի Ջատիկից Քրիստոսի ծնունդ	563	Եզրասի Ջատիկից Քրիստոսի ծնունդ	562	563
Քրիստոսի ծննդից չարչր. (Խաչելություն)	30			30
Խաչելությունից Ա. Սևերոսի 13-րդ տարին	206			
Ադամից Ա. Սևերոսի 13-րդ տարին	5738	Ադամից Քրիստոսի ծն.	5500	

Մենք նույնպես բնագրերի հիման վրա վերականգնում ենք այդ Ջատկա-
ցուցակը և տալիս մեր տարբերակը՝ աղյուսակի տեսքով, այն է՝

²⁵ **Hipolytus Verke, Vierter Band, Die Chronik**, 1-ին հրատ., Leipzig, 1929, էջ 361, 591, **Hipolytus Verke, Vierter Band, Die Chronik**, 2-րդ հրատ., Berlin, 1955, էջ 177, La Cronologie par V. Grumel, Paris, 1958, էջ 11-13:

Lib. Gen. I		Lib. Gen. II		C.I.G 8613
Ադամից բաժանում	2242	Ադամից Նոյ	2242	[2242]
Բաժանումից Աբրահամի Քանան գալը	1141 (1143)	Նոյից Աբրահամ	[1] 145	[1141]
Աբրահամից Ելք	430	Աբրահամից Ելք	430	[430]
Անապատի Ջատկից Հետոյի Ջատիկ	41 (Տիր. 42)	Ելքի Ջատկից Հետոյի Ջատիկ	[31]	2 41 39
Հետոյի Ջատկից Եգեկիայի Ջատիկ	[8]64	Հետոյի Ջատկից Եգեկիայի Ջատիկ	864	864
Եգեկիայի Ջատկից Օվսիայի Ջատիկ	114	Եգեկիայի Ջատ- կից Օվսիայի Ջատիկ	115	113 [114]
Օվսիայի Ջատկից Եզրասի Ջատիկ	108	Օվսիայի Ջատկից Եզրասի Ջատիկ	111	107
Եզրասի Ջատկից Քրիստոսի ծնունդ.	[562]	Եզրասի Ջատկից Քրիստոսի ծնունդ.	562	563
		Ադամից Քրիս- տոսի ծնունդ.	5500	
Քրիստոսի ծննդից չարչարանքներ (Խաչելություն)	30	[Քրիստոսի ծննդից չարչարանքներ (Խաչելություն)]	[30]	30
Ադամից Քրիստոսի Խաչելություն	5532	Ադամից Քրիս- տոսի Խաչելու- թյուն	[5530]	[5532]

Ա. Բաուերի և մեր կողմից վերականգնված աղյուսակներից երկուսն է, որ Ադամի Ելքի Ջատիկը Lib. Gen. I և II-ում հաշվել են, համապատասխանաբար, 3813 (2242+1141+430) և 3817 (2242+1115+430) տարիներ, մինչդեռ Անանիա Շիրակացու հաշվարկով 3810 տարի է, որոնք ունեն 3 և 7 տարվա տարբերություն: Իսկ Lib. Gen. II-ի մեր հաշվարկում Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն ստացել ենք 5530 տարի, որը համընկնում է Անանիա Շիրակացու հաշվարկին՝ $5530 : 19 = 1$ մն. = ապրիլի 4 = նիսանի 14:

Պարզ է դառնում, որ Lib. Gen. I –ի և II-ի դարագլուխներով կատարած հաշվարկները, հատկապես Ելքի, Քրիստոսի խաչելության, կատարված 3-7-րդ դարերում, մոտավոր են և հիմնված չեն հաշվման հստակ համակարգի վրա, ինչպիսին բացահայտում ենք Անանիա Շիրակացու մոտ:

«Ժամանակական կանոնի» 8-15 հատվածները²⁶ Անանիա Շիրակացու՝ այլ աղբյուրներից քաղագրած ու խմբագրած աշխատանքն է:

«Իշխանք երրայեցուց.....» հատվածի նյութերը, ինչպես ցույց է տվել Բ. Սարգսյանը, քաղված են Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, իսկ վերջում դարագլուխներով տրված են Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին՝ ամփոփված Արարչության (Ադամի) 5810 թվականով, որն, ինչպես կտեսնենք, Անանիա Շիրակացու հաշվարկի արդյունքներն են:

Նախքան այդ հարցին անդրադառնալը տեսնենք՝ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հունարենից հայերեն կատարած թարգմանությունը, ըստ մեր առաջադրած տոմարական եղանակի, երբ է իրականացվել:

Նախ նշենք, որ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը, ինչպես հայտնի է, հայերեն է թարգմանվել հունարենից, սակայն հունարեն բնագիրը չի պահպանվել: Ասենք նաև, որ առանց բավարար հիմքի համարվում է 5-րդ դարի թարգմանություն:

Բարեբախտաբար, հայերեն թարգմանության մեջ վկայված են հունական ամիս-ամսաթիվն ու դրա համարժեք՝ հայոց շարժական տոմարի ամսանունը, որը հնարավորություն է տալիս թվագրելու Քրոնիկոնի թարգմանության ժամանակը և վերագրելու Անանիա Շիրակացուն:

Բերենք բնագրի վկայությունները. «Աղեքսանդրի բազմավեպի» «Վասն ջրհեղեղին, ի նմին գրոց՝ զորմէ ասացաւ» ենթավերնագրով հատվածում գրված է. «Կրովն ասէ նմա ի քուն յայտնել, զոր հայրն անվանեն Արամազդայ, եւ այլք ժամանակ, ի հնգետասներորդում Դէսիոս (քնագրում՝ Դէնիոս, ուղղումը՝ Մ. Ավգերյանի) ամսեան, որ է մարերի, մարդկան ի ջրհեղեղէն սատակել հրաման տալ՝ զամենայն զառաջինս եւ զմիջինս եւ զվերջինս մատենից փորել եւ դնել յԱրեգ քաղաքին սիպարացուց»²⁷:

«Աբիդենայ վասն ջրհեղեղին» ենթավերնագրով հատվածում ասված է. «Յետ որոյ այլ տիրեցին, եւ Քսիսութրոս, որում Կոնոս յառաջագոյն գուշա-

²⁶ Ձեռ. 2679, էջ 41 ա-71 բ:

²⁷ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացույ ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 31-32:

կեաց լինել յաճախութիւն անձրեաց ի հինգերորդում (ըստ Մ. Ավգերյանի՝ սրբագրել՝ հնգետասաներորդ) Դէսիոս ամսոյ, որ է մարերի: Հրաման տայ՝ զմատեանս ամենայն յԱրեգ քաղաք սիպարացոց թաքուցանել»²⁸:

1993 թվականին գրած մեր աշխատության մեջ²⁹ հաշվարկը կատարել ենք երկու ամսաթվերի համար, այն է՝ Դէսիոս 15 = ապրիլի 15 = մարերի 1-30 = 520/23-636/39 թթ.: 2-րդ տարբերակի դեպքում՝ Դէսիոս 5 = ապրիլի 5 = Մարերի 1-30 = 560/63-676/79 թթ.: Նախորդ աշխատության մեջ, համաձայնելով Մ. Ավգերյանի կարծիքի հետ, Դէսեոս ԺԵ-ով, միաժամանակ գտել ենք, որ լրացուցիչ տվյալներ են պետք այդ ամսաթվերի նույնությունն ապացուցելու համար: Բայց այժմ կարծում ենք, որ Դէսեոս ԺԵ-ն պետք է սրբագրել Դէսեոս Ե-ով և թարգմանությունը թվագրել 560/63-676/79 թթ., այն վերագրելով Անանիա Շիրակացուն, միաժամանակ թվագրումն ավելի հստակեցնել՝ 658-679 թթ.: Բանն այն է, որ մեր մատենագրության մեջ 1-ին անգամ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը լայնածավալ օգտագործված ենք գտնում «Ժամանակական կանոնում», իսկ նախորդ շրջանում այն բացակայում է: Դժվար չէ մտածել, որ Անանիա Շիրակացին, Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնը թարգմանելով հունարենից հայերեն, խմբագրել և օգտագործել է իր «Ժամանակական կանոնում», որը հասցրել է մինչև 686 թվականը:

Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն թարգմանությունն ունի բնագրային արժեք, քանի որ հունարեն բնագիրը չի պահպանվել: Պակաս կարևոր չէ թարգմանչի հարցը: Մեր խորին համոզմամբ այն իրականացրել է Անանիա Շիրակացին իր վարդապետի՝ Տյուքիկոսի մոտ ուսումնառության վերջին թվագրված տարիների (658/660-679 թթ.) սահմաններում, քանի որ համաքրիստոնեական նշանակություն ունեցող Քրոնիկոնի պահպանումը և դրա թարգմանությունը կապվում է Անանիա Շիրակացու անվան հետ: Ըստ էության առաջին անգամ է հիմնավորվում Անանիա Շիրակացու կողմից Եվսեբիոսի Քրոնիկոնի հունարենից հայերեն կատարած թարգմանությունը, որը պահպանվել է միայն հայերենով, և այն ձեռք է բերում համաքրիստոնեական նշանակություն:

Անանիա Շիրակացու հունարենից հայերեն կատարած թարգմանություններից համառոտումներին կձանոթանանք հետագա շարադրանքի ըն-

²⁸ Նույն տեղում, էջ 48-49:

²⁹ Վարդանյան Ռ., Հայոց տոմարական եղանակը. Թարգմանական բնագրերի ժամանակը, էջ 45-46:

թացքում: Այստեղ միայն նշենք, որ Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի հայերեն թարգմանություններից համառոտումները բազմաթիվ են «Ժամանակական կանոնում» և սրբագրվում են մեկը մյուսով, ինչպես ցույց է տվել Բ. Սարգըսյանը³⁰:

Ուշագրավ է նաև, որ «Ժամանակական կանոնում» գտնում ենք Քր(ոն)ի-կոնի բազմավեպ պատմության Արարչության թվականը մինչև Քրիստոսի ծնունդը, այն է՝ 5198 տարի, որը հետագայում ապրած մեր հեղինակները պսակել են իբրև Եվսեբիոսի թվական: Բերենք «Կայսերք Հռոմոց»-ի համապատասխան տեղեկությունները. 1. «Ի սորա (Աւգոստոսի- Ռ. Վ.) քառասներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ Հրեաստանի: Լինի յԱդամայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամք ՐՄԿԴ (ուղղել՝ ՐՃՂԸ): Այս (հատվածը) ի ստոյգ ժամանակագրական պատմութիւնէն»³¹: Այդ ուղղումը բացատրվում է Քրոնիկոնից օգտվելու իրողությամբ:

2. «Իսկ ըստ այղոց՝ այսպէս ունի պատմութիւնք. Ըստ Հրէից մինչեւ ի ծնունդն՝ ամք չորս հազար, ըստ Շամրտացոց՝ չորս հազար, ըստ Յունակ Եպիփան Կիպրացոյ պատմութեանն՝ հինգ հազար հինգ հարեր, ըստ Քր(ոն)իկոնի բազմավեպ պատմութեանն՝ հինգ հազար հարեր իննսուն եւ ութ»³²:

Մեր կարծիքով, հեղինակը Եվսեբիոս Կեսարացուն կրկնում է՝ ցույց տալու համար, որ ինքը չի առաջնորդվել նրա հաշվարկով:

«Իշխանք Եբրայեցոց...» հատվածի վերջում դարագլուխներով տրված է Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին՝ ամփոփիչ 5810-ը՝ Արարչության թվականով: Բերենք այն. «Ժողովին ամենայն ժամանակն ի ԵԺ երորդէ ամեայ Տիբերայ կայսեր ի յիսկզբան քարոզութեան Փրկչին մերոյ] եւ յԱղեքսանդրէ Մակեդոնացոյ ամք՝ ՅԾԸ եւ ի Կիւրղոսէ պարսից թագաւորէն մինչեւ] ցԱղեքսանդրոս ամք ՄԼ[Զ]: Եւ ի Սողովմոնէ եւ ի տաճարին շինուածոյ մինչեւ ցԿիւրղոս ամք ՆԼԵ (ուղղել՝ ՈԾԵ): Եւ յելիցն յերգիպտոսէ որ ի ձեռն Մովսիսի մինչեւ ի շինուած տաճարին ամք Ն[Դ]: Եւ ի ջրհեղեղէն մինչեւ ցելսն Իդի (Իսրաեղի) ամք Ռ [ՇԿԷ]: Եւ յԱդամամ (ուղղել՝ յԱդամայ) մինչեւ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ: Միանգամայն յԱդամայ մինչեւ ի չարչարանսն Քրիստոսի [ա]մք ՏԾ (ուղղել՝ ՐՇԼԸ): Եւ ի ԵԺ (ուղղել՝ ԸԺ) ամէն Տիբերա կայսեր մինչեւ ի հալածումն եկեղեցեաց որ եղել յԹ եւ Ժ երորդ ամի Դիոկղետիանոսի

³⁰ Սարգիսեան Բ., նշվ. աշխ., էջ 13-50:

³¹ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 378:

³² Նույն տեղում:

ամբ ՄՀԶ (ուղղել՝ ՄՀԲ): Ժողովին ամենայն աուրքն եւ լինին ամբ ՐՊԺ»³³:

Վերը բերված ժամանակագրական համակարգի քննությունը մասամբ իրականացրել է Յ. Մարկվարտը և տվել աղյուսակի տեսքով՝ բնագրում վկայված դարազուլումներով, որոնցից մեկը վերականգնված է: Այսպես.

1.	Ադամից մինչև Ջրհեղեղ	2242
2.	Ջրհեղեղից մինչև Ելք	1447 ????
3.	Ելքից մինչև Տաճարի շինություն	4XX (400+X)
4.	Սողոմոնից՝ Տաճարի շինությունից մինչև Կիւրղոս	495
5.	Կիւրղոսից մինչև Ալեքսանդր	[230]
6.	Ալեքսանդրից մինչև Քրիստոսի քարոզության սկիզբ (Տիբերի 15-րդ տարին)	358
7.	Ադամից մինչև Քրիստոսի չարչարանքների տարին	4534
8.	(Քրիստոսի չարչարանքներից) Տիբերի 15-րդ տարուց մինչև եկեղեցու հալածանքներ՝ Դիոկղետիանոսի 19-րդ տարին	276
9.	Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին	5810 (5048+400+X)

Ադամից մինչև Ջրհեղեղ՝ 2242 տարի տալիս են համարյա բոլոր ժամանակագիրները: Ադամից մինչև Ելք՝ 3809 տարի վկայել է Ասողիկը: Ուշագրավ է, որ Ասողիկը հղում է Անանիա Շիրակացու ժամանակագրությունը՝ պահելով և նրա հաշվարկը (3829:19=9 մն.), որն իր հաշվումներով 3810 տարի է, ինչպես և պահել է Ելքի ամիս-ամսաթիվը՝ Նիսանի 14-ը, որը չհասկանալով ընդօրինակության մեջ փոխել են և Նիսանի ԺԴ-ն դարձրել Նիսանի ԺԳ:

3809 բաժանելով 19-ի ստացվում է 9 մնացորդ, իսկ Նիսանի 14-ն էլ ցույց է տալիս, որ Անանիա Շիրակացին Ելքի Զատիկն ընդունել է 19-ամյակի 1-ին տարի, ուստի A 2-ից առաջ գնալով 9 տարի ստացվում է Նիսանի 14-ի (=A 4-ի) լրման տարին, այն է՝ Անանիա Շիրակացու հաշվարկի 1-ին տարին: Պարզ է, որ այս հաշվարկները կատարել է բյուզանդական 19-ամյակի 1-ին տարով, հետևապես՝ Կոստանդնուպոլսի կամ բյուզանդական Արարչագործության (Ադամի) թվականության համակարգով, որի մասին կխոսենք քիչ հետո: Հետևապես՝ Ջրհեղեղից մինչև Ելք 1567 տարի պետք է վերականգնենք, և բնագրի ջնջված տարիները կլինեն Ռ (ՇԿԷ): Ի դեպ, Ելքից մինչև Տաճարի շինության տարիները՝ 490, նույնպես վերականգնվում է Ասողիկի վկայության հիման վրա, և բնագրի պակասող մասին ավելացնենք Դ (90) = ՆԴ (490):

³³ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 44:

Սողոմոնի՝ Տաճարի շինությունից մինչև Կիւրղոս դարագլխի բնագրային ՆՂԵ-ն պետք է վերականգնել ՈԾԵ:

Կիւրղոսից մինչև Ալեքսանդրը բնագրում պակասող և Յ. Մարկվարտի վերականգնած ՄԼ թիվը պետք է սրբագրել ՄԼԶ, որովհետև, ըստ բնագրի, Աքեմենյան տերության ամփոփիչ թիվը 236 է:

Ալեքսանդրից մինչև Քրիստոսի խաչելության՝ ՅԾԸ թիվը բնագրային է:

Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն և Դիոկղետիանոսի 19-րդ տարին Տիբերիոսի բնագրի ՏՇ-ն պետք է վերականգնել ՌՇԼԸ: Ադամից մինչև Քրիստոսի խաչելություն, ըստ Կոստանդնուպոլսի թվահամարի, 5538 տարի է և համարժեք է ապրիլի 4 = նիսանի 14-ին ($5538 : 19 = 9$ մն.): Հետևապես, Քրիստոսի խաչելությունից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին բնագրի ՄՀԶ-ն պետք է խմբագրել ՄՀԲ-ով, որպեսզի ($5538 + 272 = 5810$) հասնենք Ադամից մինչև Դիոկղետիանոսի ամփոփիչ՝ 5810 թվին, իսկ վերջինս էլ համադրենք ներկա 302 թվականի հետ՝ ստանալու համար Արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած թիվը ($5810 - 302 = 5508$), որը Արարչությունից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած տարեհաշիվն է՝ ըստ բյուզանդական թվականության համակարգի:

Վերականգնված համակարգը տանք աղյուսակով:

1.	Ադամից մինչև Ջրհեղեղ	2242
2.	Ջրհեղեղից մինչև Ելք	1567
3.	Ադամից մինչև Ելք	3809
4.	Ելքից մինչև Տաճարի շինություն	490
5.	Ադամից մինչև Տաճարի շինություն	4299
6.	Սողոմոնից՝ Տաճարի շինությունից մինչև Կիւրղոս	655
7.	Ադամից մինչև Կիւրղոս	4954
8.	Կիւրղոսից մինչև Ալեքսանդր	236
9.	Ադամից մինչև Ալեքսանդր	5190
10.	Ալեքսանդրից մինչև Քրիստոսի խաչելություն, Տիբերի 18-րդ տարին	358
11.	Ադամից մինչև Քրիստոսի խաչելության տարին	5538
12.	Քրիստոսի խաչելությունից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին	272
13.	Ադամից մինչև Դիոկղետիանոսի 19-րդ տարին	5810

Այսպիսով, Անանիա Շիրակացին համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջին անգամ հաշվարկել է Արարչության թվականության համակարգերը՝ հիմնվելով Շ-եակի իր ընտրած սկզբունքների՝ հաշվման

իմաստով 1-ին տարվա (A 13), 19-ամյակի 1-ին տարվա (A 4), վերադրի առաջին տարվա, որը համարժեք է հունական 19-ամյակի 1-ին տարվան (A 2) և թվերից ստացված մնացորդների վրա՝ որոշելով Արարչության 1-ին, Ելքի, Քրիստոսի խաչելության տարիները՝ համաձայն քրիստոնեական ավանդության: Դրանց համարժեք Արարչության տարիները համընկել են Նիսանի 14 = ապրիլի 4-ին, և Արարչության թվականության համակարգերն ստացել են Դիոնիսյան քրիստոնեական թվականի, այն է՝ ներկա թվականի համարժեքները, որոնց կարևորությունը ժամանակակից ժամանակագրության համար էական նշանակություն ունի, քանի որ բացահայտվում են ներկա թվականները կա՛մ բացարձակ թվերով, կա՛մ ± տարվա ճշտությամբ:

«Կայսերք հռոմվոց....» ենթավերնագրով հատվածն սկսել է Հուլիոս Կեսարից և ավարտվել Հուստինիանոս 2-րդի 2-րդ տարով, բայց թվագրել է նրա 1-ին տարին, որը, ինչպես կոեսենք, ժամանակակցի վկայություն է, որովհետև ստացել է բացարձակ ճշգրիտ տարեթիվ՝ հայոց թվականի հաշվարկով և համահունչ է ներկա թվագրմանը: Ընտրում ենք Հուլիոս Կեսարից մինչև Քրիստոսի ծնունդ և Հուստինիանոս 1-ինից մինչև Հուստինիանոս 2-րդ ընկնող ժամանակահատվածները, որովհետև այնտեղ առկա են տարբեր թվականության համակարգեր, որոնց միջոցով հեղինակը թվագրել է հռոմեական կայսրերի տարիները:

Բերենք այդ վկայությունները. «Գայիոս՝ որ կոչեցան Յուդիոս՝ ամս երիս և ամիսս երիս: Սա առաջին եկաց ի Հռոմ ինքնակալ կայսր, յերրորդ ամին Կղեոպատրայ Եգիպտոսի եւ Աղեքսանդրի թագավորի, յետ դադարելոյն Անտիոքայ Ասորոց թագաւորութեանն, ի ՃՁԴ Ողիմպիադին, ի ՁԸ (ուղղել՝ ՉԸ) ամի Հռոմ քաղաքի շինութեան: Որ և ինքն իսկ Յուդիոս եգիտ զլուսնացոյցն Հռոմվոց, եւ զԲեսեքիստոնն կարգեաց, եւ են ամբ յառաջ, քան զլնուլ ն[ա] հանջին. եւ զԿիւնիտղոս ամիս՝ Յուդիս վասն յայն ամսեան ծնանելոյն:

Աւգոստոս՝ ամս յիսուն եւ վեց, եւ ամիսս վեց. Սեբաստոս Հոքսաւիոս յորջորջեցաւ եւ զՍեքստոս ամիս՝ Աւգոստոս անուանեաց, վասն ի նոյն ամսեան իւրոյ ծննդեանն լինելոյ: Նա համարէն տիրեաց ամենայն Հռոմմայեցոց եւ Յունաց: Ի սորա քսաներորդի եւթներորդի ամի սպանաւ Կղեոպատր Ալեքսանդրի եւ Եգիպտոսի թագաւոր. եւ եղեն նուաճեալք ընդ Հռոմմայեցոց: Ի սորա քառասներորդ երկրորդ ամի ծնանի Յիսուս Քրիստոս ի Բեթղեհէմ Հրեաստանի: Լինի Սդաւմայ մինչեւ ի ծնունդն Քրիստոսի ամբ ՐՄԿԴ (ուղղել՝ ՐՃԴԸ): Եւ էր Հրէից թագաւոր Հերովդէս այղազգի, Անտիպատրեայ Ասկաղո-

նացոյ եւ մար Եպրեայ Արաքացոյ: Ի տորա երեսուն եւ մի ամի եղեւ ծնունդն Քրիստոսի....»³⁴:

Կատարենք Օլիպիադայի թվականի համար նախատեսված գործողությունը՝

$184 - 4$ տարի ($=1$ օլ.) $= 183 \times 4 = 732$, $776 - 732 = 44$ մ.թ.ա.: $44 + 708 = 752$ մ.թ.ա.՝ Հռոմ քաղաքի շինության տարին՝ ընդունված 753-ի փոխարեն, որովհետև Անանիա Շիրակացին Հռոմ քաղաքի շինության 1000-ամյակի թվականի ավարտից (248 թ.) հետո դրել է հռոմեական թվականի Շ-եակի 1-ին տարին ($= 249$ թ.) և կապել Հայոց մեծ թվականի 1-ին տարվա հետ՝ 304 հաստատունով ($304 + 1 = 553$ թ. = ապրիլի 13-ի լրման տարի), իսկ $44 - 42 = 2$ (Եվսեբիոսը 2 տարվա սխալ է թույլ տվել) $- 2 = 0$ (զրո թվականը հաշվին գումարելով) $= 1$ մ. թ. = Քրիստոսի ծննդյան թվականին:

Ուշագրավ է նաև, որ «ի հալածումն եկեղեցեաց, որ եղև յին ու տասաներորդի ամի Դիոկղետիանոսի» դարագլուխ հատվածը կրկնված է «Ժամանակական կանոնի» մի այլ հաշվարկի մեջ, որին համադրել է այլ իրողություն, այն է՝ «Առ որով հալածումն եկեղեցեաց. եւ կենարար վարդապետութիւնն Քրիստոսի պատմեցաւ հայոց [ի] ձեռն սուրբ Գրիգոր Պարթեւի»³⁵, իսկ «Կայսերք Հռոմոց» ենթավերնագրի հատվածում առկա են այլ համադրումներ: Այսպես, «Ի սոյն իսկ Դիոկղետիանոսէ եւ սուրբքն Հռիփսիմեանք փախստական եղեալք ի Հայս՝ մարտիրոսացան. եւ եւ ի նոյն ժամանակ ելեալ ի Վիրապէն խոստովանողն Քրիստոսի սուրբն Գրիգոր, եղև քարոզ Հայոց, եւ լուսատրեաց մկրտութեամբ, եւ եկաց յետ այնորիկ ամս երեսուն»³⁶:

Այս բոլոր իրողությունները փաստորեն կապել է Դիոկղետիանոսի 19-րդ տարվա հետ, որը համարժեք է ներկա 302/303 թթ. ($283/284 + 19$), իսկ ինչ վերաբերում է Գրիգոր Լուսավորչին 30 տարի տալուն, ապա նա հետևել է ավանդությանը և նախորդ պատմիչներին, առանձնապես Մովսես Խորենացուն, ում հիշատակել է «Մովսէս Խորենացոյ եւ Անդրեասի» ենթավերնագրում:

Բերենք Հուստինիանոս 1-ին և Հուստինիանոս 2-րդի հատվածի ժամանակագրական տեղեկությունները. 1. «Յուստիանոս ամս ԼԹ (ուղղել՝ Ը) Իսկ նորա հրամայեալ լինել ժողով ի Կոստանդնուպալիս, որ ասի Ե-երորդ

³⁴ Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 378:

³⁵ Նույն տեղում, էջ 374:

³⁶ Անդ., էջ 385:

ժողով (553 թ.): [որք կարգ]եցին զիրեանց հայիոյութիւնն գլովսս ԺԴ..... եւ որք ոչ հնազանդեցան հրամանի թագաւորին ընդունել զաղմկեալ ժողովոյն սահմանադրութիւնս եւ հաւանեալ նորոգածելութեանս տաւնից եկեղեցական կարգաց զոր հաստատ]եաց անարեւն Յուստիան[ոս ժողովեցելով]քն ի Կոստանդնուպալիս ի Ե-երորդ ժողովին զաւր առաքեալ հեղմոնս արեանց արար ի տեղիս տեղիս: Եւ առաքեաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ [զի փոխեսցեն զաւրն] (Փետրվարի 14-ը փետրվարի 2-ով - Ռ. Վարդանյան) Խ-երորդ նուիրաւոր տաւնին ընդ ժամայն փրկչին մերոյ ի տաճարն եւ արասցեն [ըստ] հրամանի թագաւորին, զոր եւ յերուսաղէմացոցն պատմութեան հաստատեալ կայ այսպէս. մեք որ յերուսաղէմ բնակեալ ենք զոր տեսաք սքանչելիս պատմեմք ձեզ որ ի Հայքդ էք. Ի յԼԳ ամին Յուստինիանոսի (= 560 թ.) սկսաւ սատանայ մարտնչել ընդ ճշմարտութեանն եւ փոփոխեցին զսուրբ հաւատս եւ այղայղեցին զկարգս արինաց, եւ տաւնից զոր եղ Յակովբոս եղբայրն Տեառն (նկատի ունի «Ընթերցուածոց»-ի Երուսաղէմյան տարբերակը - Ռ. Վ.), քանզի մտեալ առաջի թագաւորին հրեայ ոմն հերետիկոս գրգռեաց զթագաւորն վասն Տեառնընդառաջաց, թէ չէ պարտ թոյլ տալ Երուսաղէմացոց արտաքոյ եկեղեցական կարգաց առնել զաւր ծննդեանն (հունվարի 6-ին) եւ զԽ-երորդացն (փետրվարի 14-ին), այլ որպէս ամենայն երկիրս հռոմոնց տաւնէ (դեկտեմբերի 25-ին և փետրվարի 2-ին) [պարտ է եւ] նոցա տաւնել եւ թագաւորն ունգն[դիր] եղել եւ վաղվաղկի գրէ թագաւորասաստ հրամանաւ առ Ոստոքոս հայրապետ քաղաքին եւ առ ամենայն կղերս եկեղեցոյ թէ Տեառնընդառաջն ըստ ծննդեան արարէք փերրուարի ամսոյ Բ.....: Իսկ յ[ետ մա]իու երանելոյն Մակարա Երուսաղէմացիք ընգ[լան գժողով] Քաղկեդովնի ի նոյն թագաւորին հրամանէ»:

« [...]ի նոյրին ԼԴ ամի կարգեցին աղեքսանդրացիք զԺԹ ԴԺ-երորդն զատկաց ԻԸ-եակ շրջագայութեամբ ՇԼԲ ամաց բոլորակն, եւ ի նոյն թագաւորի ի [Ե] -երորդ ամի հայ թուականն կարգեցաւ»³⁷:

2. «Յուստիանոս՝ [ամս ԺԳ եւ ամիսս] Թ»:

3. «Տիբեր ամս Է (ուղղել՝ Դ)»:

4. «Մարիկ ամս քսան եւ [ամիսս] երիս: Ի սորա ատուրս սպանին զՈրմիզդ Պարսից արքայ, եւ Խոսրով՝ որդի Որմզդի փախստական եղեալ՝ անգաւ առ մարիկ, եւ զկնքեցաւ որդի նորա: Եւ յետ ժամանակի թագաւորեցոյց զԽոսրով Պարսից աշխարհին: Եւ ի նորին ատուրս եղել դարձեալ միսանգամ ժողով Հայոց եւ Հռոմմոց՝ վասն նորին աղանդոյն Քաղկեդովնի,

³⁷ Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, էջ 395-396:

ժողովին ի Կոստանդնուպաւոյս, եւ եղեն պատմեալ Հայք: Ի սորա յաւուրս բաժանեցին զերկիրս Հայոց Հռովմոց եւ Պարսից թագաւորքն. եւ երկու կաթողիկոսք նստան ի Հայս. Մովսէս ի Դուին պարսից կողմանն՝ ուղիղ հաւատով, եւ Յովնան ի Հռովմոց կողմանէ Քաղկեդոնի աղանդովն»³⁸:

5. «Փոկաս ամս Է (ուղղել՝ Ը): Ի սորա աւուրս սկսաւ Խոսրով վրէժ խնդրել ապանմանն Մաւրիկայ. Յաղագս ուխտին՝ որ ի մէջ երկոցունց. եւ որով եւ գերութեամբ ամս քսան եւ հինգ»³⁹:

6. «Հերակղ ամս երեսուն եւ մի: Առ սովաւ աստուածաշէն քաղաքն Երուսաղէմ ի զաւրացն պարսից, յորում Եկեղեցիք աներեցան եւ սուրբ խաչն գերեցաւ, եւ կտակարանք այրեցան: Սա յեւթն եւ ի տասն ամին իւրոց սպան զԽոսրով եւ դարձոյց զսուրբ խաչն: Եւ ինն եւ տասն ամին արար ժողով ի Թեոդոսուպաւոյս, որ այժմ ասի Կարնոյ քաղաք. Բազում եպիսկոպոսաց, առ Եզրիւ կաթողիկոսի Հայոց եւ Հռոմոց, եւ Ասորոց, յորում Հայք Քաղկեդոնիկք եղեն, եւ զժողովն ընգալան»⁴⁰:

7. «Կոստանդին ամ[ի]ս[ս] երիս: Ի սորա աւուրս տիրեցին տաճիկք Ասորոց, եւ արկին ընդ հարկաւք զԵկեղեցիս սուրբ քաղաքին Երուսաղէմի»⁴¹:

8. «Կոստանդին որդի Կոստանդիանի թոռն Հերակղի ամս ԻԹ (ուղղել՝ ԻԷ): Ի սորա Բ ամին առաւ Դուին ի տաճկաց...⁴²: Ի սորին աւուրս եղեւ շփոյթումն տաճկաց սաստիկ պատերազմաւ՝ եւ դադարեցին ի հարկատրութենէ նոցա Հայք, Վիրք եւ Աղուանք՝ ծառայեալ նոցա ամս Լ»:

9. «Կոստանդին երրորդ [ամս ԺԶ (թն. Դ) ամիսս Ե]»⁴³:

10. «Յուստիանէս որդի երրորդ Կոստանդինի ամս Բ: Ի սորայ առաջին ամին տիրեցին հիսպսային ազգն, որ ասին Հագիրք՝ Հայոց, Վրաց եւ Աղուանից եւ սպանին ի պատերազմի զիշխանս Հայոց, Վրաց եւ Աղուանից՝ յամսեանն Սահմի, որ ար Ժ էր ամսոյն՝ ի ՃԼԴ թուականին հայոց»⁴⁴:

Առաջին վկայության մեջ կատարվել է Ը>Թ-ի փոխվելու գրչական սխալ:

2-րդ հաղորդման մեջ պակասում է ամս ԺԳ և ամիսս:

3-րդ տեղեկության մեջ կատարվել է Է>Դ-ի գրչական սխալը:

³⁸ Անդ, էջ 397:

³⁹ Անդ:

⁴⁰ Անդ:

⁴¹ Անդ:

⁴² Անդ, էջ 398:

⁴³ Անդ:

⁴⁴ Անդ, էջ 399:

4-րդում պարզապես բաց է թողնվել ամիսս բառը:

5-րդում է-ի ուղղումը Ը-ի հիմնավորվում է, որովհետև Խոսրովի պատերազմը Փոկասի ու Հերակլի դեմ տևել է 25 տարի, և նա սպանվել է Հերակլի 17-րդ տարում, ուստի $25 - 17 = 8$ (Ը):

7-րդում ամիսս արտագրել են ամի:

8-րդում Կոստանդին 4-րդի ԻԹ տարին պետք է սրբագրել ԻԷ:

Հուստինիանոս 2-րդի 1-ին տարում Հազիբը (Խազարները) հարձակվել են Անդրկովկասի վրա Հայոց մեծ թվականի 134-րդ տարվա Սահմի 10-ին, որը համարժեք է ներկա 685 թվականի օգոստոսի 16-ին: Ակնհայտ է, որ Հուստինիանոս 2-րդի 1-ին տարին, որը համահունչ է ներկա թվագրությանը և բացարձակ թվական է, կարող է տալ ժամանակագրական պատկեր՝ նկատի ունենալով գրչական սխալները և բացթողումները և հաշվելով հունվարից հունվար և ոչ սեպտեմբերից սեպտեմբեր: Վերջին դեպքում թիվը կընկնի ներկա երկու տարվա վրա:

Առկա է նաև 2-րդ հաշվարկը: Անանիա Շիրակացին Հուստինիանոս 1-ինի 25-րդ տարին կապում է Հայոց 1 թվականի՝ Էսայան 532-ամյակի սկզբնավորման և գործադրման հետ, որի մասին խոսում է նաև Զատիկ ճառի մեջ՝ լրման օրերով: Անդրեասի 200-ամյակի ավարտը 552 թ. (M 25): Էսայանների հաշվման իմաստով առաջին տարին A 13-ի լրման տարին է ($= 553$ թ.), որը համարժեք է Հայոց մեկ թվականին՝ մարերի 7-ի լրման տարին ($= 553$ թ.), իսկ Շ-եակի ստեղծման և 19-ամյակի 1-ին տարին՝ 562 թ. ($=$ ապրիլի 4-ի լրման տարի $=$ Հայոց 10 թ.):

Այս հաշվարկով Հուստինիանոսի 25-րդ և 34-րդ տարիները տալիս են մեկ տարվա սխալ՝ մեկ տարով ավելի ($562 - 34 = 528$ և $553 - 25 = 528$):

Տանք ամփոփիչ աղյուսակ երկու հաշվարկների արդյունքներով:

Հուստինիանոս 1-ին (38 տարի) = 527-565 թթ. (528-566 թթ.)
Յուստին 2-րդ (13 տարի) = 565-578 թթ. (566-579 թթ.)
Տիբեր (4 տարի) = 578-602 թթ. (579—603 թթ.)
Մորիկ (20 տարի) = 582 - 602 թթ. (583 - 603 թթ.)
Փոկաս (8 տարի) = 602- 610 թթ. (603 - 611 թթ.)
Հերակլ (31 տարի) = 610 -641 թթ. (611-642 թթ.)
Կոստանդին 2-րդ (3 ամիս) = 641 թ. (642 թ.)
Կոստանդին 3-րդ (27 տարի) = 641 - 668 թթ. (642 - 649 թթ.)
Կոստանդին 4-րդ (17 տարի) = 668 - 685 թթ. (669 - 686 թթ.)
Հուստինիանոս 2-րդ (2 տարվա համարժեքները) = (685-686 թթ.)

Այլ խոսքով, ստացված բացարձակ թվականները՝ տարբեր համակարգերով, էական նշանակություն ունեն ընդհանուր և հայ ժամանակագրության համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ցույց ենք տալիս, որ Ա. Շիրակացու ժամանակական-տոնացույցային մատյանի՝ «ՇԼԲ կարգ»-ի (հետագայում անվանվում է «Շ-եակ» կամ «Քննիկոն») առաջին մասը «Ժամանակական կանոն» է, որը սկսել է արարողության մեկ թվականից և հաստատվել մինչև ներկա 686 թ.:

Պարզել ենք, որ Ա. Շիրակացին օգտվել է Հիպոլիտոս Հռոմեացու «Ծննդոց գրքի» ժամանակագրության՝ Անդրեասի խմբագրությունից, որը հունարենից հայերեն են թարգմանել Եզնիկ Կողբացին և Հովսեփ Պաղնացին 430-434 թթ., ինչպես և Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնից, որի թարգմանիչը և առաջին անգամ օգտագործողը Ա. Շիրակացին է (658/660-679 թթ.):

Հիմնավորել ենք, որ Ա. Շիրակացին խմբագրել է վերոհիշյալ հեղինակների ժամանակական գրությունների մեջ հանդիպող թվականներ և համաքրիստոնեական մատենագրության մեջ առաջին անգամ համակարգված հաշվարկել է արարչության (ևն) թվականության համակարգերը՝ հիմնվելով Շ-եակի իր ընտրած սկզբունքների վրա:

Բանալի բաներ – Ա. Շիրակացի, ժամանակական կանոն, Հիպոլիտոս Հռոմեացի, Անդրեասի խմբագրություն, Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոն, Շ-եակ:

«ХРОНОЛОГИЧЕСКИЙ КАНОН»

РАФИК ВАРДАНЯН, ЛЕВОН САРГСЯН

В данной статье показано, что первой частью хронологического-календарного сборника – «532-летнего пасхального цикла» (в дальнейшем – «500-летний цикл» или «Книжон» (Каноникон)) – Аналии Ширакаци является «Хронологический канон», который начинается первым годом от сотворения мира и завершается 686 годом нашей эры.

В статье установлено, что Аналиа Ширакаци пользовался произведением «Толкование на Бытие» Ипполита Римского в редакции Андреаса Византийского, переведенным в 430-434 гг. с греческого на армянский язык Езником Кохбаци и Овсепом Пагнаци и «Хроникой» Евсевия Кесарийского, переводчиком (658/660-679 гг.) и первым пользователем которой являлся сам Аналиа Ширакаци (658/660-679).

В конце исследования обосновано, что Аниана Ширакаци отредактировал даты, встречающиеся в хронологических списках вышеназванных авторов и впервые в истории христианской литературы систематизированно вычислил системы летосчислений «От сотворения мира» (и т. д.), опираясь на разработанные им же принципы 500-летнего цикла.

Ключевые слова: Аниана Ширакаци, Хронологический канон, Ипполит Римский, редакция Андреаса Византийского, Хроника Евсевия Кесарийского, 500-летний цикл.

“CHRONOLOGICAL CANON” BY ANANIA SHIRAKATSI

RAFIK VARDANYAN & LEVON SARGSYAN

This article shows that the 532-year table (later referred to as 500-year table or “Knnikon” or “Kanonikon” i.e. the “Chronicle”) is the “Chronological Canon”, which represents the first part of the chronological-calendar of religious fêtes. Anania Shirakatsi started collecting them from the 1st year of ritual celebrations, which were approved only in 686 AD.

The article also establishes that Anania Shirakatsi has used two sources for his “Chronological Canon”. The first source is from the works on chronography in the “Commentary on Genesis” by Hippolytus of Rome, translated from Greek into Armenian by Eznik Koghbatsi and Hovsep Paghntsatsi in 430-434 AD via the redaction of Andreas. The second is the “Chronicle” by Eusebius of Caesarea, which Shirakatsi himself had translated in 658/660-679 AD and he was the first to use it.

At the end of the article, it is evidenced that Anania Shirakatsi has edited some dates in the chronicles of Hippolytus of Rome and Eusebius of Caesarea that he had referred to as sources. Shirakatsi, applying the principles of 532-year cycle that he had worked out, has for the first time systematically calculated and specified the dates of all the scriptures of Christianity embracing the whole period starting with the creation of the world.

Key words – A. Shirakatsi, Chronological Canon, Hippolytus of Rome, the redaction of Andreas of Byzantium, Chronicle by Eusebius of Caesarea, 532-year cycle.